Doi:10.54503/0135-0536-2022.2-122

ՆԵՐԸՄԲՌՆՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԿՅԱՆՔՈՒՄ*

ՍՈՒՍԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Բանալի բառեր՝ Հովհ. Թումանյան, ներըմբռնողականություն, կանխազգացում, կանխատեսում, երազ, հոգեբանական ազդակներ, վերզգայական ընկալումներ, երևակայություն, ստեղծագործական ներշնչանք, բնազդ:

Նախաբան

Ներըմբռնողականությունը (այսուհետև նաև՝ ինտուիցիա), որպես մարդու գերբնական կամ ֆենոմենալ ունակություն, դասվում է բնագիտական ու հոգեբանական այն երևույթների շարքին, որոնց ուսումնասիրությունը դեռևս չի կարողացել հանգեցնել գիտական միանշանակ եզրակացությունների: Նույնը վերաբերում է մարդկային վերզգայական այլ ընկալումներին ու զգացողություններին, որոնցից են ինտուիցիան և հեռազգացությունը[1]*:*

Տաղանդավոր մարդկանց հոգեբանական նկարագիրը կազմելու համար կարևոր է նաև նրանց՝ թե՛ կյանքում տեսած, թե՛ նրանց ստեղծագործություններում ներկայացվող երազների ուսումնասիրությունը, քանի որ դրանք արդեն այնպիսի ծավալների են հասել, որ առանց որևէ մեկին ճանաչելու, որոշ ժամանակահատվածում երազների կանոնավոր գրանցման միջոցով կազմում են նրա՝ բավականաչափ հարուստ հոգեբանական նկարագիրը:

Հովհաննես Թումանյանի կյանքում և արվեստում թե՛ ինտուիցիան, թե՛ հեռազգացությունն առավել ընդգծված են արտահայտվել: Դրանք ուղեկցել են նրան ամբողջ կյանքում և նաև դրսևորվել գեղարվեստական ստեղծագործության մեջ:

Բանաստեղծը մարդու ինտուիտիվ և տրամաբանական տիպերի միաձույլ ներդաշնակություն էր: Նա օժտված էր և՛ ինտուիցիայով, և՛ վառ երևակայությամբ, և՛ բարձր զարգացած բանականությամբ, և՛ երևույթների գոյության ու զարգացման ընդհանուր սկզբունքները թե՛ զգալու, թե՛ գիտակցելու ունակությամբ: Հենց սրանով է պայմանավորված, որ Թումանյանի հերոսները հաճախ են հայտնվում երազների առեղծվածային աշխարհում, տեսնում են կանխագուշակ երազներ, օժտված են ինտուիտիվ զգացումներով, երազում թե արթուն ապագայի մեջ թափանցելու, քնած ժամանակ հոգեկան ակտիվություն դրսևորելու կարողությամբ:

---

* *Ներկայացվել է 25. I. 2022 թ., գրախոսվել է 28. I. 2022 թ., ընդունվել է տպագրության 02. V. 2022 թ.:*

[1] *Տե՛ս* Ананьев. 1960, 336–348; Бодалев. 1995, 9–88; Хэнзел. 1970, 27–30; Лурия. 2006, 48–51.

Ենթագիտակցական երևույթների թումանյանական ընկալումը

Ներքնատեսությունն ու նախագուշակումը եղել են Թումանյանի աշխարհընկալման և մարդկային հոգու կեցության, ճանաչողության էական բաղադրամասերը, նրա իմացության կարևոր միջոցներից: Բանաստեղծը կարողանում էր վերլուծել իր կռահումակությունն ու նախազգացումները: Ենթագիտակցական երևույթների թումանյանական ընկալումը ծնվել էր ինչպես նրա աշխարհաճանաչողությունից, այնպես էլ՝ սեփական կենսափորձից: Թումանյանը հավատում էր մարդու հոգու խորքում թաքնված ուժերին, նրա ունակությունների և կարողությունների անսահման հնարավորություններին, միշտ վստահում էր իր ներքին ձայնին, որն օգնում էր նրան կողմնորոշվել կյանքի ամենաբարդ ու բեկումնային պահերին:

1913 թ. դեկտեմբերի 19-ին՝ Հայ գրողների ընկերության 23-րդ երեկույթին՝ Լեոյի «Տենդենցիան գրականության մեջ» թեմայով դասախոսության օրը, բանախոսության շուրջ ծավալված գրական ասուլիսում Թումանյանն ընդգծել է ստեղծագործողի համար կանխազգացման կարևոր դերը: Նրա կարծիքով՝ այն արվեստագետը, ով օժտված չէ կանխագիտությամբ ու միայն ժամանակի հուզող գաղափարներն է մերկապարանոց հանգավորում, ապա նա արվեստի փոխարեն «կեղծ ապրանք է ծախում, և ժամանակի արևի տակ նրա գույները կխունանան»[2]:

1916 թ. դեկտեմբերի 30-ին Հայ գրողների կովկասյան ընկերության երեկույթում՝ Հ. Սուրխաթյանի «Ռուսահայ նորագույն բանաստեղծությունը» դասախոսությունից հետո, Թումանյանը, դիմելով սկսնակ բանաստեղծներին, ասել է. «Ամենից շատ և ամենից լավ բանաստեղծն ինքն է իրեն հասկանում և իր ներքին բնազդն ու ինտուիցիան է իր ամենաուղիղ առաջնորդը»[3]:

1916 թ. օգոստոսին «Ցաուստի» մասին իր խոհերն արտահայտելիս բանաստեղծն ասում է. «Ամեն բան մարդուն մատչելի է, կարող է, պետք է անել կամենալ: Որոշել նպատակը ու գնալ, գիտակից կյանքով ապրել: Առողջ լինել, խոր ինտուիցիա ունենալ, ամեն ինչ զգալ, իմանալ»[4]:

Թումանյանի ընկալմամբ՝ բանաստեղծական տաղանդին ընորոշ է «չունչը, սրբազան սարսուռը, դողը», իսկ էական հատկանիշներն են՝ «կանխատեսությունը, ինտուիցիան, երևակայությունը, հարմոնիայի զգացումը»[5]: Նրա խոսքերով՝ հենց այն պահերին է արվեստագետը հասու լինում ստեղծագործական ոլորտների, երբ նրա մեջ «շարժվում են նրա ինտուիտիվ զգացմունքները»[6]: Բանաստեղծը վստահ էր, որ զգացմունքների՝ ոչ կանխամտածված, հանկարծակի փայլատակումը ստեղծագործողի «արարչական վիճակի» անհրաժեշտ բաղադրիչն է: Թումանյանն իր անավարտ հոդված-ուսումնասիրություններից մեկում՝ «Գրողի նամակներում», գրում է. «Աստծուց հետո միայն բանաստեղծն է, որ ստեղծում է: Այո՛, շատ ճիշտ է: Աստված և բանաստեղծն են ստեղծում ... Երկուսն էլ ստեղծում են ոչինչ բաներից մեծ բաներ, երկուսն էլ

[2] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1995, 537:*
[3] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1995, 302: Տե՛ս նաև «Հորիզոն» (Թիֆլիս), 13. I. 1917:*
[4] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1987, 149:*
[5] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1987, 179:*
[6] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1987, 179:*

ստեղծում են իրանց պատկերի նման, երկուսն էլ հայտնվում են իրանց ստեղծածի մեջ, թեև իրանց չես տեսնում ...

Բանաստեղծ-անհատն, իհարկե, անցավոր մարդ է. ես բանաստեղծության ոգին եմ ասում – շրջում է այս ժողովրդի քառասային կյանքի վրա և, անշուշտ, մի օր նա կասի իր արարչական խոսքը – թող լինի լույս – ու կլինի լույս (ընդգծումը մերն է – Ս. Հ.)»[7]:

Հարյուրամյակ անց նույն միտքն է արտահայտում հոգեբան Իգյասլավ Մորոզովը, ով իր «Ինտուիցիայի էությունը» աշխատության մեջ ստեղծագործող մտքի հատկանիշներ հռչակելով անմահությունը, տարածականության և մարմնավորման ձգտումը՝ գրում է. «Արարիչն ու մարդը ունեն հավասար արարչականություն՝ նաև զուտ բնագիտական չափանիշներով»[8]:

Թումանյանը ինտուիցիայի առկայությամբ էր հիմնավորում ստեղծագործող մարդու առանձնահատուկ էությունը. արվեստագետի «տարօրինակ» լինելը մեկնում էր ներշնչանքի առկայությամբ. «Կան և տարօրինակ մարդիկ: Շատ սակավաթիվ մարդիկ, որոնք խոսում են ակամա, ազդված, ներշնչված»[9]: *Մարդու ենթագիտակցական աշխարհը, ըստ նրա, կապվում էր տիեզերականի ու անհասանելիի հետ: «Բանաստեղծությունը ամենաանկեղծ արտահայտությունն է այդ անողոք տիեզերական օրենքի»*[10], *– ասում էր Թումանյանը: Նա մարգարեականությունն աղերսում էր նարեկացիական համամարդկային այն գերագույն նպատակի հետ, որին կարող էր ձգտել մարդը. «Ամենաբարձր բանը աստվածանալն է՝ բարձրանալ, խորանալ, ներշնչվել խոհերով ու զգացմունքներով և ստեղծագործել»*[11]: *Թումանյանը կանխատեսելու ունակությունը պայմանավորում էր բնազդային զգացողությունների հետ. «Բնազդը մեծ բան է – ամենաէականն է, և առողջ բնազդը քչերին է տրված. շատերն են զգում, քչերն են կանխատեսում»*[12]:

Բանաստեղծն այդ քչերից էր, և ներշնչանքն ու «առողջ բնազդը» դարձնում էր գեղարվեստական երկի գնահատման չափանիշ: Ստեղծագործական երկունքի պահը նա միշտ կապում էր ստեղծագործողի ներքին մղումի, ներշնչանքի ու ինտուիտիվ զգացումների հետ: Սակայն Թումանյանը վստահ էր, որ բնազդի հետ պետք է միշտ բանականություն լինի, հակառակ դեպքում արվեստի ճշմարիտ գործ չի ստեղծվի: Ժամանակակից գրականագիտական միտքը միանգամայն ճշգրիտ է համարում Թումանյանական այդպիսի մոտեցումը: Գրականագետ Զավեն Ավետիսյանը ստեղծագործողի հոգեբանությունը ներկայացնելիս նշում է. «Ենթագիտակցականը ... պահի մեջ նվաճում է այն, ինչ ընդունակ չէ անել տրամաբանությունը»[13]: *Թումանյանը չափազանց կարևորում էր հարցը, թե գրողը ստեղծագործելիս ունեցե՞լ է արդյոք ինտուիտիվ զգացումներ, որը նա բնորոշում էր հայտնություն և պայծառատեսություն: Միայն բանականությամբ ստեղծված երկը նրա համար գեղարվես-*

---

[7] *Թումանյան. 1994, 410–411:*
[8] Морозов. 1990, 115.
[9] *Թումանյան. 1994, 408:*
[10] *Թումանյան. 1994, 411:*
[11] *Թումանյան. 1987, 199:*
[12] *Թումանյան. 1994, 199:*
[13] *Ավետիսյան. 1998, 80:*

տական տեսանկյունից անարժեք էր, քանի որ «Ստեղծագործողը նախօրոք չի՛ մտածում, չի՛ ասում. հանկարծ է լինում, աննկատելի, ոչ նախամտածված»[14]: Նույնիսկ այն, ինչ ինքն էր ստեղծում, ստորադասում էր իր զգացածին ու ապրումներին և խոստովանում էր. «Երազներս, մտքերս ավելի շքեղ են»[15]:

Թումանյանն ուներ հարուստ գրադարան, որտեղ քիչ չէին փիլիսոփայական-հոգեբանական ուղղվածության գրքերը: Դրանց ուսումնասիրությունը նրան մղում էր էլ ավելի խոր թափանցել մարդկային հոգու առեղծվածների աշխարհը, հայտնաբերել բնության ու տիեզերքի գաղտնիքները, մարդու և բնության հարմոնիայի, հաճախ նաև՝ նույնության խորհուրդը, անտեսանելին տեսանելի դարձնել, ցուցադրել առեղծվածայինը: Բանաստեղծը մեծ ուշադրությամբ ուսումնասիրել էր հատկապես ֆրանսիացի փիլիսոփա Բերգսոն Անրիի գիրքը, որի մասին 1916 թ. հունվարի 17-ին Ն. Աղբալյանի հետ զրույցի ընթացքում ասել է. «Բերգսոնը շատ հետաքրքրական վերլուծություններ է անում. ստեղծագործական պրոցեսում էականը ինտուիցիան է»[16]: Ըստ Բերգսոնի՝ ինտուիցիան «ինտելեկտուալ համակրանքի»[17] իմացություն է, իսկ ըստ ֆրանսիացի փիլիսոփա Ռենե Դեկարտի՝ ամբողջական մտքի հանկարծակի նվաճում: Թումանյանի համար՝ «Ամենաուժեղ բանը ինտուիցիան է, պայծառատեսությունը, հայտնությունը: Նա կայծակի թռիչք ունի՝ վայրկենապես լուսավորում է, հրաբուխի ուժ՝ կատաղի կերպով ժայթքում է»[18]:

Թումանյանը երազների մասին

Ինտուիտիվ զգացողությունների ընկալման ու մեկնության փորձառությամբ պայմանավորված՝ Թումանյանը հաճախ էր խորհրդածում երազների նշանակության մասին: Մասնավորապես, վատ երազները միշտ էլ ազդում էին բանաստեղծի տրամադրության և վարքագծի վրա: Ոլորտի մասնագետների կարծիքով՝ «ներքին ձայն» ասվածին ուշադրություն են դարձնում միայն աշխարհի մարդկանց չնչին տոկոսը: Համաշխարհային մեծություններից Ա. Էյնշտեյնը, Թ. Էդիսոնը, Պ. Մարկոնը, Հ. Ֆորդը օժտված էին ինտուիցիան ճիշտ օգտագործելու, ներքին ձայնին վստահելու ունակությամբ: Համաշխարհային մշակույթի պատմության մեջ սակավաթիվ են այնպիսի անհատները, որոնք իրենց ենթագիտակցական աշխարհի հետ մշտական կապ են հաստատել ինտուիցիայի միջոցով: Թումանյանն այդ քչերից էր: Նա զարգացած ինտուիցիայով օժտված այն եզակիների շարքում էր, ովքեր բավական ուշադիր են թե՛ արտաքին և թե՛ ներքին հոգեբանական ազդակներին:

Թումանյանի ընկալումներում երազը, ներըմբռնողականությունն արվեստի դրսևորման հետաքրքիր ու բարձրագույն ձևերից էին, որոնք արդյունք էին գրողի ստեղծագործական ներշնչանքի: Բանաստեղծը գիտեր և արձանագրել է, որ երազներն ակնթարթային են ու դրանցից «քչերն են մնում մեր մտքում և մնացածներից էլ հազարից մեկն ենք հասկանում, էն էլ մոտավորա-

[14] Թ ու մ ա ն յ ա ն. 1987, 179:
[15] Թ ու մ ա ն յ ա ն. 1987, 78:
[16] Թ ու մ ա ն յ ա ն. 1987, 134:
[17] Թ ու մ ա ն յ ա ն. 1987, 134:
[18] Թ ու մ ա ն յ ա ն. 1987, 216:

պես»[19]: Նա տգիտություն է համարում երազների նշանակությունն արհամարհելը կամ ներքին ձայնն անտեսելը. «Սովորաբար արհամարհում են էս պարզ ու իմաստուն երևույթները և ծիծաղում են տգիտորեն: Համարում են սուտ ու անկարելի: Այնինչ էս ամենը շատ պարզ ու հասարակ երևույթներ են: Էնքան պարզ ու հասարակ, ինչպես աչքով տեսնելն ու ականջով լսելը»[20]: Թումանյանի ընկալումներում միայն հոգով առողջ և արթուն, մտքով ոչ կույր մարդը կարող է հասկանալ երազն ու իրականությունը, ընդ որում, երազին և կյանքին ոչ հասու մարդուն նա անվանում է՝ «Եթե կուզեք՝ ամենից ավելի հաճախ կույր»[21]: Երազն ու նախազգացումը բանաստեղծի համար նույնքան իրական ու ճշմարիտ էին, որքան արդեն կատարված կամ կատարվող իրողությունը. «Երազ, թե իրոք—այդ միթե մի՞ն չէ ... Կյանքը երազ է, երազն էլ մի կյանք ...»[22]: Երազը տարբերվում էր միայն նրանով, որ կապվում էր ժամանակային եռամիասնության երրորդ կողմի՝ գալիքի ու կատարելիի հետ: Թումանյանը տարօրինակ ոչինչ չէր տեսնում, որ երազում հաճախադեպ են անսովորն ու անմեկնելի երևույթները, քանի որ այդպիսիք քիչ չեն նաև իրականության մեջ, որում կատարվող միանգամայն ակնհայտ երևույթները նույնպես անմատչելի են մարդուն: Եվ քանի որ մարդը բանական արարած է, նա պետք է ձգտի հասնել անմեկնելիին: Ելնելով նաև սեփական հոգեվերլուծությունից՝ Թումանյանը համոզված էր. «Բնազդի հետ միշտ բանականություն պիտի լինի»[23]:

Թումանյանի ներըմբռնողականության դրսևորումները. երազը բանաստեղծի կյանքում

Թումանյանագիտությունը վաղուց արձանագրել է ինտուիցիայի դերը բանաստեղծի կյանքում, թեև այդ թեմայով որևէ առանձին հոդված կամ ուսումնասիրություն չի գրվել: Հետազոտելով բանաստեղծի ստեղծագործական լաբորատորիան՝ Զ. Ավետիսյանն արձանագրել է. «Թումանյանի ինտուիտիվ բռնկումները դրոշմվել են նրա ինքնագրերի վրա ... Կան գործեր, որ նա սկսել է գրել շատ հանգիստ, գեղեցիկ ձեռագրով, ապա ընդհատել է: Որոշ ժամանակից հետո վրա է հասել կանխազգացումը, նա հապճեպ գրի է առել մտքի ակնթարթային թելադրանքը: Գրել է և ապա նորից ընդհատել: Միառժամանակ անց նույն թղթի վրա հանգիստ իմի է բերել և մշակել ինտուիտիվ բռնկմամբ հղացած բանաստեղծական պատկերը, տվել նրան վերջնական ձև»[24]:

Կանխազգալով իր կյանքի և ժամանակի գրեթե բոլոր կարևոր դեպքերը՝ Թումանյանը որոշել էր ինքնակենսագրության մեջ հատուկ տեղ հատկացնել իր ինտուիցիային, հեռազգացությանն ու երազներին. «Երազ, նախազգացում — դրանք մեծ բաներ են և կարևոր: Ինքնակենսագրությանս մեջ առան-

---

[19] Թ ու մ ա ն յ ա ն. 1999, 429:
[20] Թ ու մ ա ն յ ա ն. 1999, 429:
[21] Թ ու մ ա ն յ ա ն. 1999, 430:
[22] Թ ու մ ա ն յ ա ն. 2019, 116:
[23] Թ ու մ ա ն յ ա ն. 1987, 166:
[24] Ա վ ե տ ի ս յ ա ն. 1973, 27:

ձին տեղ պիտի տամ իմ երազներին, նախազգացումներին»[25]*: Գրողն ուզում էր ամենքին հայտնի դարձնել կյանքի արտասովոր իրավիճակներում հոգու պայծառատեսության բռնկման պահերը, երբ մարդը զգում է որևէ իրադարձության անխուսափելի ավարտը, վերահաս ճակատագրական աղետներն ու ողբերգությունը:*

Թումանյանը գիտեր, որ կանխազգալու հատկությունը ժառանգել էր իր ծնողներից, հատկապես՝ մորից. «Իմ հերն ու մերը նախազգացումի, պայծառատեսության ու երազի զարմանալի ընդունակություն ունեին …

Իսկ մերս մինչև օրս էլ ինձ զարմացնում է իր նախազգացումներով, իր պայծառատեսությամբ ու իր երազներով»[26]*:*

Ինքնակենսագրական գրառումներում բանաստեղծը մտադիր էր հատուկ ուշադրության արժանացնել մոր երազներն ու կանխազգացումները. «Մորս երազ տեսնելու և նախազգացումի ընդունակությունը. օրինակներ (իմ հիվանդության ժամանակ և այլն)»[27]*: Մեկ այլ առիթով ասել է. «Մայրս էլ էր զգայուն և ինձ պատահած դժբախտությունները զգացել է, պարզ տեսել»*[28]*:*

Տեր Թադևոսի ընտանիքում թերևս ամենից շատ անդրանիկ որդին՝ Հովհաննեսն էր ժառանգել դեպքերը նախազգալու այդ հատկությունը: «Երազը իմ կյանքում» գրառման մեջ Թումանյանը վկայում է. «Չեմ սխալվիլ, եթե ասեմ՝ իմ կյանքում մի որևէ դեպք չի պատահած, որ առաջուց նախազգացած ու նախատեսած չլինեմ: Նախազգացած ու նախատեսած էլ որ ասում եմ, ասում եմ ոչ միայն արթուն ժամանակ, այլև քնած ժամանակ, երազում, այլաբանորեն, պատկերներով, խորհրդանշաններով (ընդգծումը մերն է – Ս. Հ.) »[29]*: 1916 թ. մարտի 2-ին մանկավարժ Հեղինե Մելիք-Հայկազյանին ուղղված նամակում բանաստեղծը գրում է. «Բայց նա (մայրը – Ս. Հ.) մի հատկություն ունի, որ նրանից բան թաքցնել չի լինում: Նախազգացում ասեմ, նախատեսություն, թե՞ պարզատեսություն. իր մոտիկներից որի հետ մի բան պատահի, որտեղ ուզում է լինի, նա արդեն վաղօրոք գիտի: Երազի ձևով լինի, թե նախազգացումի – գիտի: Ես էլ զուրկ չեմ էդ ընդունակությունից և վերջին բոլոր մեզ հասած դժբախտությունները ոչ միայն օր առաջ գիտեի, այլև մերոնց ասել էի, թե էսպես բան պետք է պատահի, մինչև անգամ որոշ կարգադրություններ էի արել: Այժմ մայրս էլ հենց սպանելու օրից գիտի, որ Արտաշեսն*[30]

[25] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1987, 216:*

[26] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1999, 430:*

[27] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1999, 418:*

[28] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1987, 189:*

[29] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1999, 429:*

[30] *Արտաշեսը Հովհ. Թումանյանի կրտսեր եղբայրն էր (1892–1916), ով «հերոսաբար» զոհվեց 1916 թ. հունվարի 23-ին Բաթումի մոտ՝ Արախվեյի ռազմաճակատում, «Ճորոխի շրջանում թուրքերի դեմ կռվելիս» [տե՛ս «Հորիզոն», 27. I. 1916, 07. II. 1916, նաև՝ «Տարազ» (Թիֆլիս), 1916, թիւ 3, 45]: Թումանյանը եղբայրների հետ որոշում է 23-ամյա Արտաշեսին հուղարկավորել Թիֆլիսում և նրա մահը թաքցնել մի քանի ամիս առաջ որդեկորույս դարձած մորից, ով որդու՝ 44-ամյա Ռոստոմի (1871–1915) սպանությունից հետո (1915 թ. սեպտեմբերի 16) դեռ ուշքի չէր եկել (Ռոստոմի սպանության մանրամասները տե՛ս Ե ղ ի ա զ ա ր յ ա ն. 2021, 231–263):*

սպանված է, շարունակ պնդում է, ապացույցներ է պահանջում, որ ցույց տանք, թե կենդանի է, և շատ դժվար է լինում խաբելը»[31]:

Ինտուիտիվ զգացողությունների դերը Թումանյանի անձնական և ստեղծագործական կյանքում

Հայտնի է, որ Ներսիսյան դպրոցը չավարտած բանաստեղծը վիճում էր ժամանակի հայտնի գիտնականների, եվրոպական համալսարաններն ավարտած մտավորականների հետ և հաղթում նրանց: Պ. Սևակն ասում էր. «Թումանյանն է մեր նոր ու նորագույն գրականության ամենախելոքը՝ բոլոր զարգացածների մեջ և ամենից ավելի ունակը՝ բոլոր ընդունակների մեջ ... տեսեք, թե ինչպես է բանավիճում Աճառյանի, Մառի, Աբեղյանի հետ և բանակռվում բազմաթիվ ուսյալ համալսարանավարտ անվանի գործիչների հետ՝ Արծրունուց մինչև Արասխանյան, Խալաթյանցից մինչև Մակինցյան (ընդգծումը մերն է – Ս. Հ.)»[32]:

Թումանյանը համոզված էր, որ այդ բանակռիվներում, ինքնակրթությունից բացի, իր դերն ուներ նաև բնազդը: 1910 թ. հոդվածներից մեկում նա գրում է. «Միշտ մի ճշմարիտ, ուղիղ ու հզոր առաջնորդ եմ ունեցել – և դա եղել է իմ բնազդը. նա է ինձ հանել ու հովանավորել»[33]:

Կարելի է հիշատակել գրողի՝ կյանքի դեպքերը կանխազգալու և պայծառատեսության բազմաթիվ օրինակներ, որոնք վկայում են մարգարեականության հատկանիշով բանաստեղծի օժտվածությունը:

Ընդ որում, գրողը նախազգացել է ոչ միայն իր և մերձավորների կյանքի դեպքերը, այլև հասարակության կյանքում տեղի ունեցող պատմական իրադարձությունները: Բանաստեղծը կանխազգացել էր 1905 թ. Ռուսական հեղափոխությունը, հայ-թաթարական ազգամիջյան կռիվները, 1915 թ. Մեծ Եղեռնը, Անդրանիկի քաղաքական վեճերը, Պյատիգորսկից Թիֆլիս եկող գնացքի վթարի ենթարկվելը (1917 թ.) և այլն:

1905 թ. Թումանյանը Շուլավերում երազում տեսնում է, թե ինչպես է Ռուսաստանի տափաստանների վրա «երկինքը պատռվեց և արյուն ու վահր թափվեց, կարմրեց, սևացավ»[34]: *Բանաստեղծը եզրակացնում է, որ շուտով Ռուսաստանում հեղափոխություն կսկսվի, և այնքան վստահ էր երազի հիման վրա կատարած իր կռահումներում, որ նույնիսկ գրազ է գալիս. «Մյուս օրը ծանոթներիս հանդիպեցի: Ռուսաստանը կհաղթվի, տակնուվրա կլինի, հեղափոխություն կսկսվի և այն և այլն ... Չհավատացին, գրազ եկանք ... էդպես էլ եղավ»*[35]: *Դերենիկ Դեմիրճյանը հավաստիացնում է, որ Թումանյանը կանխազգացել է 1905–1906 թթ. հայ-թաթարական բախումները. «Թումանյանը դեռ շատ վաղ, քան հայ-թուրքական կոտորածներն էին՝ անհանգիստ էր ... Դեռ այն ժամանակ, երբ ... ընդհարումների մասին ոչ ոք չէր մտածում, ան-*

---

[31] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1999, 234:*
[32] *Ս և ա կ. 1974, 365:*
[33] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1994, 513–514:*
[34] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1987, 188:*
[35] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1987, 188:*

գամ չէր կասկածում՝ Թումանյանը մտախոով հայացքը դարձնում էր այս խնդիրը»[36]:

1908 թ. դեկտեմբերի 23-ին Թումանյանի և նրա որդի Մուշեղի ձերբակալությունը զգացել է թե՛ ինքը՝ բանաստեղծը, թե՛ նրա մայրը: «Դաշնակցական գործի» ընթացքին դեռևս անտեղյակ բանաստեղծը նախազգում է գալիք վտանգը, իր բանտարկության օրն ու ժամը: Ըստ Լեոյի վկայության, դեկտեմբերի 23-ին՝ ձերբակալության օրը, բանաստեղծն իրենց տանը հրավիրված էր ճաշի. «Մի տխուր նախազգացում կար … Մեր տանից Հովհաննեսը գնաց ուղղակի իրանց տունը և այդտեղ, մի քանի ժամ հազիվ անցած, գիշերամիջին նրան ձերբակալեցին»[37]: *Դեկտեմբերի 23-ին՝ այդ նույն օրը, Թումանյանի մայրը վատ երազ է տեսնում: Եվ հաջորդ օրը՝ դեկտեմբերի 24-ի առավոտյան, գյուղից գալիս է քաղաք և ասում. «Թե տղիս վրա երազ եմ տեսել ու եկել, Օհաննես ո՞ւր ա …*

… Եվ նանը (Թումանյանի մայրն է՝ Սոնան) պատմեց, թե երազիս տեսա թիսկանը իր ճուտերով մեր հողերի վրա գնաց, համա որձակը երկու ճուտերով ջգվեց, ներքի կուռը գնաց … ասի, տղիս մի բանա պատահել, վեր կացա եկա»[38]:

Մինչև համաշխարհային աղետի սկսելը՝ 1914 թ., բանաստեղծն արդեն կանխազգացել էր աշխարհացունց աղետը և հայ ժողովրդին սպասվող ողբերգությունը: Դուստրը՝ Նվարդը, գրում է. «Ցագվերում տրամադրությունը լավ չէր. ներքուստ ինչ-որ տխուր ապրումներ ուներ»[39]: *Այդ մասին հավաստիացնում է նաև ինքը՝ բանաստեղծը, «Կարելին և ցանկալին» հոդվածում. «Թերևս ոմանք զարմանան, եթե ասեմ, որ պատերազմի նախընթաց ամիսներին ես էնքան պարզ էի զգում պատերազմը, որ հատուկ բանաստեղծություն ունեի, մինչև անգամ ուզում էի տպել «Նոր հոսանք» ամսագրում, բայց ինչ-ինչ պատճառներով անհարմար գտանք»*[40]: *Թումանյանը մտովի այնքան պարզ է տեսել եղեռնի պատկերները, որ անիծել է աշխարհի հզորներին ու եղեռնն իրականացնողներին մինչ պատերազմի սանձազերծումը.*

Հրացաններ են ճայթում սրտիս մեջ,
Հրացաններ են ճայթում անդադար,
Ու լաց են լինում սարսափած ու խեղճ
Որբ երեխաներ անթիվ, անհամար …

Ընդհանուր սուգ է ծավալվում անվերջ
Ու պաղ ոռնում է ժամանակը չար:
… Եվ ժամանակը լինի անիծված,
Եվ աշխարհքը լի չարով ու թույնով[41]:

[36] *Թումանյանը ժամանակակիցների հուշերում (այսուհետ՝ ԹԺՀ). 2009, 31:*
[37] *ԹԺՀ. 2009, 65:*
[38] *Թումանյան. 1987, 90:*
[39] *Թումանյան. 1987, 114:*
[40] *Թումանյան. 1995, 466:*
[41] *Թումանյան. 2018, 438:*

Թումանյանի կանխազգացումներն ազդակ էին ստանում հաճախ արտաքին աշխարհից, հենվում էին պատմաքաղաքական դեպքերի քաղաքագիտական վերլուծությունների վրա, որոնք հեռատես բանաստեղծին ուղղորդում էին կանխատեսումների ճանապարհով: «Էսպես-ով, – գրում է Թումանյանը, – ... ես ասել եմ էն, ինչ որ իմ կարծիքով ... պետությունների ու պատմական դեպքերի հարաբերություններից դատելով կարող էր պատահել ...»[42]:

Իսկ 1915 թ. յուրաքանչյուր վայրկյան մտովի տեսնելով գալիքի սարսափելի պատկերները՝ նա զարհուրանքով գրում է. «Հրաշք պետք է լինի, որ առանց մեծ աղետների անցկացնենք»[43]: Կնոջը՝ Օլգային, գրում է. «Ասում է՝ ահի տարին խաբարը շատ կլլի, մահի տարին՝ երազը: Քանի անգամ վատ երազներ եմ տեսել թե՛ ընդհանուր դրության, թե՛ տղերանց վրա: Անցյալ գիշեր էլ երազում տեսա՝ մեր տունը կտրել էին: Մարդ ինչ որ մտածում է, էն էլ տեսնում է երազում: Բայց ճշմարիտ ու իմաստուն նախազգացումներ էլ կան, որ շատ են վախեցնում»[44]:

1916 թ. ամռանը Թումանյանը կանխազգացել է գալիք հեղափոխությունը և դրան հաջորդող ազգային քաղաքական դրությունը, ինչպես նաև մեզ համար պատերազմի անբարենպաստ ընթացքը: Դեռևս 1916 թ. հունիսի 3-ին գրական գործիչ Տիգրան Հովհաննիսյանին ուղղված նամակում գրում է. «Մի ալիք, ինձ թվում է, դեռ պետք է գա էս ամառ ու գարկի, ով գիտի մինչև Կովկասի պատնեշը»[45]: Հայ թարգմանիչ, խմբագիր Երվանդ Թաղիանոսյանին ուղղված 1917 թ. հունիսի 15-ի նամակում էլ կարդում ենք. «Էն էլ շարունակ ինձ թվում է, թե որտեղ որ է՝ մեր աշխարհքը տակն ու վրա է լինելու ...»[46]:

Թումանյանի՝ 1921 թ. Կ. Պոլիս մեկնելու օրերին նանը վատ երազ է տեսնում և դարձյալ շտապում Թիֆլիս, պատմում երազն ու խնդրում չգնալ՝ իր խոր ներքնատեսությամբ զգալով, որ որդու առողջության համար ճակատագրական է լինելու այդ ուղևորությունը. Սոնան անհանգստանում էր, որովհետև հավատում էր իր նեքին ձայնին. «Դու ծովի երեսը դուրս մի՛ գա, էն երկիրը մի՛ գնա ...»[47]: Զանսալով ո՛չ իր, ո՛չ էլ մոր ներքին ձայնին՝ բանաստեղծը մեկնում է Կ. Պոլիս և վերադառնում միանգամայն ուժասպառ ու անբուժելի հիվանդ: Կ. Պոլսից վերադառնալուց հետո նա բարձրաձայնել է իր կանխազգացման մասին: Թումանյանը նախօրոք է զգացել իր օրգանիզմում կատարվող ախտաբանական գործընթացները, նույնիսկ հիվանդության սկզբնավորման պահը. «Պոլսում դուշ ընդունելու ժամանակ զգացի, որ իմ ներսում ինչ-որ բան պատահեց, ինչ որ եղավ, էնտեղ եղավ»[48], – ասել է բանաստեղծը գրական գործիչ Ջալալ Տեր-Գրիգորյանին: Ամիսներ անց, երբ Թումանյանը հիվանդ պառկած էր, նանը գյուղից գալիս է տղային տեսնելու

---

[42] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1995, 466:*
[43] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1999, 267:*
[44] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1999, 269:*
[45] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1999, 240:*
[46] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1999, 262:*
[47] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1987, 247:*
[48] *ԹԺՀ. 2009, 415:*

և մեղադրում նրան իր ներքին ձայնին չանսալու համար. «Օհանե՛ս ջան, երազս տեսել էի, բա որ ասի ծովի երես դուրս մի՛ գա՞...»[49]:

Դեռ բժիշկները վիրահատության որոշումը չէին կայացրել, երբ բանաստեղծը զգում էր թե՛ հիվանդության ողջ ծանրությունը, թե՛ վիրահատության անխուսափելիությունը: «Ես իմ երազը տեսել եմ, – ասում է նա, – առանց օպերացիայի բան չի լինի»[50]: Բանաստեղծի խոսքը վերաբերում էր այն երազին, որ նա տեսել էր Կ. Պոլսից դուրս գալու նախօրյակին: Երազում վանեցի գաղթականների փրկության համար նահատակված որդին՝ Արտավազդը, փաթաթվել էր հորը, ամուր բռնել և թույլ չէր տալիս գնալ: «Ես արյան մեջ էի, – հիշում է իր երազը բանաստեղծը, – չորս կողմս սև արյուն էր թափված, նա էլ ինձ փաթաթված»[51]: Ստամոքսագեղձի քաղցկեղով հիվանդ բանաստեղծը երբեք չի մոռացել այդ մղձավանջային երազը և հիվանդության օրերին պատմել է սարսափով:

Թումանյանի կանխագգացումների իրողություններ դառնալը, նրա՝ բնազդով շրջապատող կյանքն ու քաղաքական ազգային պատմական դեպքերը կռահելու ունակությունը հայտնի էին ոչ միայն նրա մերձավորներին, գրեթե բոլոր ժամանակակիցներին, այլև նույնիսկ հարևան ազգերին: Թատերական գործիչ Մկրտիչ Ջանանի վկայությամբ՝ «Լոռվա շրջանում թուրքերը կոչում են Թումանյանին փեյգամբեր: Եվ իսկապես, Թումանյանը հեռատես էր և պայծառատես միանգամայն»[52]: Ռուս բանաստեղծ Սերգեյ Գորոդեցկին գրում է. «Նրա լավատեսությունը մակերեսային բարեհոգություն չէ, այլ ճշմարիտ գաղտնագիտություն: Նա ծնվել է, որ կատարի բանաստեղծի խորհրդավոր և արդի կուլտուրայի մեջ հետզհետե մոռացող կոչումը՝ լինել կանխագուշակ, լինել մարգարե, լինել տեսանող»[53]:

Գաղտնիք չէ, որ երազները, փոքրաթիվ բացառությամբ, արթնանալուց անմիջապես հետո մոռացվում են. այն դեպքում, երբ 7–8 ժամ քնի դեպքում մարդը 4–5 անգամ հայտնվում է երազային (պարադոքսալ) փուլում: Հաճախ երազների լավ ու վատ հիշելը պայմանավորված է նաև կոնկրետ անհատի առանձնահատկություններով և այն հանգամանքով, թե որքանով է երազի բովանդակությունն ընդունելի: Թումանյանն այն սակավաթիվ մարդկանցից է, ովքեր լավ են հիշում իրենց երազները, թեև ամենաբազմազբաղն ու ամենահոգաշատն էր իր շրջապատի մարդկանցից: Նա բոլոր մանրամասներով հիշում էր հատկապես մղձավանջային երազները, զգում նրանց խորհրդանշական իմաստը, հավատում երազներում դրսևորվող իր ներքին ձայնին, ինտուիտիվ ապրումներին ու կռահումներին:

1922 թ. մարտի 9-ին՝ Թիֆլիսի Շահպարոնյանի հիվանդանոցում գրողի վիրահատության օրը, տեսնելով, թե բժիշկների ինչ մեծ խումբ է պատրաստվում մասնակից լինել իր վիրահատությանը՝ բանաստեղծը կանխազգում է, որ օրգանիզմում «կտրելու» մի բան կա, սակայն բժիշկները չեն հեռացնելու այն՝ միմյանց հետ համաձայնության չգալու պատճառով: Վիրահատարան տանե-

[49] Թ ու մ ա ն յ ա ն. 1987, 247:
[50] Թ ու մ ա ն յ ա ն. 1987, 190:
[51] Թ ու մ ա ն յ ա ն. 1987, 190:
[52] ԹԺՀ. 2009, 822:
[53] ԹԺՀ. 2009, 891:

լուց առաջ նա իր շուրջը խմբված վիրաբույժներին՝ Մարկևիչին, Տեր-Ներսիսյանին, Զաչիկյանին, Սաղյանին և մի քանի այլ բժիշկների ու քույրերի առակ է պատմում. «Կացեք ձեզ մի առակ պատմեմ: – Ասել է բանաստեղծը:

– Մի օր մոլլի էշը տանում են գեղամեջ՝ պոչը կտրելու ... մոլլի կնիկը թե՝ այ մոլլա, էշդ գեղամեջ տարան՝ պոչը կտրեն, հասի՛ ... Մոլլեն թե՝ ո՞վ տարավ. թե՝ գեղովի, մոլլեն թե՝ ա՛յ կնիկ, հանգիստ կաց, բան չեն անի, տանողը որ մեկը լիներ՝ պոչը կկտրեր, հիմա որ սաղ գեղն ա կտրելու՝ չեն կտրի. կտրելու ժամանակ մինը կասի՝ երկար կտրենք, մյուսը թե՝ կարճ, մեկը կասի՝ մկրատով, մյուսն էլ թե՝ դանակով, ու չե՛ն կտրի ... Եվ ճիշտ որ չեն կտրում ...

Հիմի իմն է, հասարակության հիվանդ եմ դառել, էդքան որ եկել եք օպերացիա անելու, ով է իմանում, կտրելո՞ւ եք թե չէ ...»[54]:

Մի քանի ժամ անց Թումանյանի կանխագգացումը իրականացվում է: Երեք ու կես ժամ տևած վիրահատության ընթացքում բժիշկները երկու անգամ խորհրդակցություն ունեցան՝ որոշելու համար ուռուցքը հեռացնեն՝ «կտրեն», թե՛ ոչ: Ի վերջո որոշում են չկտրել: Բժիշկների անհամարձակության պատճառներից մեկն էլ, ինչպես նկատել էր բանաստեղծը, իր «հասարակական հիվանդ» լինելն էր՝ գրողի հանրաճանաչ լինելու հանգամանքը, որը կաշկանդել էր բժիշկներին՝ առավել վճռական միջոցների դիմելու հարցում: Բժիշկ Տեր-Ներսիսյանը նույնիսկ հրաժարվել էր Թումանյանին վիրահատելուց՝ վախենալով, որ «Հետագայում կասեին, թե հայ բանաստեղծը բժշկի զոհ դարձավ»[55]: Իսկ վիրահատությունից հետո, թեև իրեն ֆիզիկապես ավելի լավ էր զգում, իսկ բնավորությամբ էլ՝ լավատես է, այնուամենայնիվ, միանգամայն հստակ զգում էր մոտալուտ մահը, զգում էր, որ «այժմ ավելի վտանգ կա»: Արքեպիսկոպոս Մեսրոպ Տեր-Մովսիսյանին 1922 թ. օգոստոսի 29-ին բանաստեղծը գրում է. «Մահի հետ էլ եմ հաշտվել ...»[56] և այդ պատճառով ոչնչացնում է իր սևագիր ձեռագրերը՝ մտածելով, թե «Վերջացնելու ժամանակ չեմ ունենալու, էնպես էլ չեմ ուզում մնան»[57]:

1922 թ., երբ Թումանյանի հիվանդությունը դեռ ոչ ոք ճիշտ չէր ախտորոշել և բժիշկների կարծիքով նրան Եվրոպայում կարող էին բուժել, Թումանյանը երազում արդեն տեսնում է իր թաղումը: Աշնանը բանաստեղծը դստերը՝ Աշխենին, պատմել է. «Իբրև ինձ թաղում են, ես էլ աչքերս բաց նայում եմ վերև. շատ մարդկանց գլուխներ եմ տեսնում, բայց պարզ միայն Աղայանին եմ տեսնում գլխիս վրա կախված և խորը հայացք գցած վրաս»[58]:

1915 թ. ամռան վերջին էջմիածնում որբերին խնամելիս երազում տեսնում է եղբոր՝ Ռոստոմի մահը: «Ահ ու դողով շարունակ սպասում էի մի փորձանքի»,[59] – գրում է Թումանյանը: Առավոտյան հավատալով իր կանխագգացումներին ու երազին՝ վախեցած հեռագրում է եղբորը, զգուշացնում վերահաս վտանգի մասին, խնդրում անմիջապես հեռանալ Լոռուց և գալ Թիֆլիս: Սակայն նույն օրերին նրան հասնում է եղբոր սպանության լուրը: Ըստ

---

[54] Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1987, 255:
[55] Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1987, 255:
[56] Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1999, 428:
[57] Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1999, 428:
[58] Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1987, 190:
[59] Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1999, 230:

ամենայնի՝ Թումանյանը նրան հեռագրել էր սեպտեմբերի 14-ին կամ 15-ին, քանի որ Ռոստոմը սպանվել է սեպտեմբերի 16-ին՝ Թումանյանի հեռագիրը գրպանում[60]:

Բանաստեղծը Թիֆլիսում նույն օրը, նույն պահին զգացել էր նաև հոր՝ Տեր-Թադևոսի մահը Դսեղում: 1898 թ. հունվարի 5-ին՝ Ջրօրհնեքի երեկոյան, նա Թամամշյանների տանը ընթրիքին հանկարծ զգում է, որ հայրը մահացավ: Բանաստեղծը գրում է. «Տրամադրությունս վատացավ, տխրեցի, հյուրերը նկատեցին, հանգստացրին, բայց ոչինչ չօգնեց: Եկա տուն: Երեք օր հետո մարդ է գալիս գյուղից, թե հայրդ Ջրօրհնեքի գիշերը մեռել է (հունվարի 5-ին)»[61]:

Վստահելով իր ներքին ձայնին՝ Թումանյանը գրեթե միշտ ճիշտ էր կողմնորոշվում անձնական և ազգային-հասարակական կյանքի ամենաբարդ ու բեկումնային պահերին: Այս իմաստով բացառություն չէր նաև Պետերբուրգի բանտը:

Դատապաշտպան Օ. Գրուզենբերգը 1912 թ. Պետերբուրգի բանտում ոչ մի կերպ իր անհանգստությունը չէր կարողանում հաղորդել բանաստեղծին: Թումանյանը ներքին համոզմունք ուներ, որ արդարանալու է[62]: *Ամենքին հորդորում էր՝ «Դուք հանգի՛ստ եղեք», վստահեցնում՝ «Տրամադրությունս ... լավ է ու խաղաղ»*[63]: *Այդ վստահությունն ուներ պատմահոգեբանական ազդակներ: Այն բխում էր ինչպես բանաստեղծի աշխարհայացքային մոտեցումներից, այնպես էլ ապագան կանխազգալու նրա ունակությունից և երազներին տված նշանակությունից: Բանտում նրա ենթագիտակցության պատկերային արտացոլումները օգնում էին հոգեկան առողջության ու հավասարակշռության պահպանմանը: Տեսած երազները, որոնց մեջ ամենից շատ երեխաներին էր տեսնում, օգնում էին բանաստեղծին հարմարվել բանտային կյանքի պայմաններին և ունեին հարմարվողական նշանակություն:*

Թումանյանը նախազգացել էր ոչ միայն այն, որ իրեն արդարացնելու է ցարական դատարանը, այլև, որ իրեն պաշտպանելու է հենց դատախազը, ում կոչումը մեղադրելն էր. «Մնում է միայն մի բան, որ դատախազն էլ պաշտպանի ինձ»[64]: *Եվ, իրոք, դատախազ Վ. Սերգեևը 1912 թ. մարտի 10-ին արտասանած իր ճառում ոչ միայն Թումանյանին անպարտ է ճանաչում, այլև դրվատանքի ու նրա գործի հանդեպ հիացմունքի խոսքերով է դիմում բանաստեղծին. «Ինձ մնում է ասել՝ գնա փաթաթվիր քո սպիտակ դրոշակի մեջ և հանգիստ քնիր: Ես հրաժարվում եմ քեզանից»*[65]:

Գրողի հոգեկան ներքին խաղաղությունը հենվում էր նրա կանխազգացման և այն երազի վրա, որ նա տեսել էր բանտում, երբ հայրը՝ Տեր Թադևոսը, նրան լույս ճանապարհ էր ցույց տվել: Սովորաբար, երբ Թումանյանը երազում տեսնում էր հորը, լավ նշան էր համարում ու լավատեսությամբ տրամադրվում: Բանտում մի գիշեր երազում տեսել էր, թե ինչպես հայրը կանգնած է

[60] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1987, 191:*
[61] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1987, 188:*
[62] *ԹԺՀ. 2009, 639:*
[63] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1999, 141, 534:*
[64] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1999, 141, 534:*
[65] *ԹԺՀ. 2009, 644:*

լույս և մութ աշխարհների ճամփաբաժանում: Նա մութ ճանապարհի վրա կանգնած որդուն առաջնորդել էր դեպի լույս ճանապարհը: Այդ երազից բանաստեղծն արթնացել է ավելի հանգիստ հոգեվիճակում, հուզական տեսակետից ավելի լիցքաթափված: Երազն ամրապնդել էր նրա հոգեբանական ինքնապաշտպանությունը. «Այդ երազը տեսնելուց հետո ավելի հանգստացա»[66]:

1922 թ. աշնանը, արդեն մահամերձ վիճակում Թումանյանը երազում դարձյալ տեսնում է հորը՝ սև շորերով, բայց այս անգամ արդեն նա լույս ճանապարհ չի ցույց տալիս, այլ լռելյայն անցնում է որդու կողքով՝ ասես հիշեցնելով անցավոր կյանքից հեռանալու նրա հերթը: 1923 թ. Մոսկվայի հիվանդանոցում բանաստեղծն անվերջ տեսնում էր մահացած, մտերիմ, ծանոթ ու անծանոթ մարդկանց[67]: Նվարդը գրում է, որ մահից երկու շաբաթ առաջ հիվանդանոցում առավոտյան թեյին հայրն ասել է. ««Սակավիկ մը, և ինձ չեք տեսնի», – Քրիստոսի վերջին խոսքերն են իր աշակերտներին: Նույնը ես հիմա ձեզ եմ ասում, երկու գիշեր է մնացել ձեզ հետ անցկացնելու, հետո կհեռանամ ձեզնից»[68]:

1921 թ. փետրվարյան քաղաքացիական պատերազմի օրերին բանաստեղծը խաղաղասիրական առաքելությամբ սահնակով Երևան էր ուղևորվում: Ամենամեծ վտանգը ռազմաճակատի սահմանն անցնելն էր: Թումանյանը պատմում է. «Մի ֆրոնտից մյուսն անցկենալու ժամանակ ... ընկա երկու կողմից էլ հրացանային և պուլեմյոտային կրակի տակ – երկու անգամ, երկարատև-սաստիկ, և էսպեսով ճյունի միջով անցա մոտ տասը վերստ, մինչև գիշերվա կեսը մնացի դիրքերի առաջին ... Ես այժմ էլ չեմ հասկանում, թե ինչպես ազատվեցի էն կրակի տակից ու էնքան կարմիր գնդակների տարափի միջից: Բայց զարմանալին էն է, որ հենց նույնիսկ էն բոպեներին՝ մի կողմից գլխարկս բարձրացրած ձեն էի տալիս, որ չարձակեն, մյուս կողմից մտածում էի, թե չեմ սպանվելու: Ասում էի՝ եթե սպանվելու լինեի՝ առաջուց նախազգացած կլինեի ... էնքան գնդակ է գալիս ինձ վրա, և ոչ մինը չի դիպչում ...»[69]:

Թումանյանի ինտուիտիվ ունակությունների անբաժան մասն էր նաև հեռազգացությունը (տելեպաթիա): Նա մտքերն ու երևույթները կարողանում էր ընկալել ու տեսնել հեռվից՝ տարածության մեջ: Բանաստեղծն ուներ վեցերորդ զգայարան: Ինքնաճանաչման և իրականատեսության ներհայեցական մտազննության այդ միջոցի դերը Թումանյանի կյանքում առանձին ուսումնասիրության նյութ է: Նշենք միայն, որ 1911 թ.՝ Ղ. Աղայանի հանկարծամահ լինելու օրը, Թումանյանն իր դրասեղանի առջև նստած ընկերոջ մահվան նույն ակնթարթին չարագուշակ տեսիլքի պես միանգամայն պարզ ու հստակ տեսնում է Աղայանի վայր ընկնելն ու մահկանացուն կնքելը[70]:

---

[66] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1987, 190:*
[67] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1987, 191:*
[68] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1987, 305:*
[69] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1999, 379:*
[70] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1994, 360, նաև՝ Ղազարոս Աղայանը ժամանակակիցների հուշերում. 1967, 284, 388:*

Գեղարվեստական պատկերները երազում

Թումանյանը նաև ստեղծագործում էր երազում կամ իր երկերը ստեղծում էր երազային պատկերների ազդեցությունների տակ, այնպես, ինչպես նշանավոր գիտնականներից ու արվեստագետներից ոմանք՝ Ժ. Լաֆոնտենը, Ա. Դանթեն, Ս. Ռաֆայելը, Մենդելեևը, Ս. Դալին, Վ. Ի. Սուրիկովը և այլ: Պահպանվել է մանկավարժ Տիգրան Փիրումյանի վկայությունը, ըստ որի՝ Թումանյանը գիշերները սովորություն ուներ անկողնուց վեր կենալ և հանկարծ միտքը եկած տողերը գրել: Նա հաճախ ոտանավորով խոսում էր նաև երազում ու արթնանալիս գրի էր անցկացնում: Այդպես է ստեղծվել «Մեհրի» պոեմի մի հատվածը[71]*:*

Թումանյանը կարող էր երազում գտնել ամիսներով որոնվող բառն ու արտահայտությունը, միտքը շարունակ տանջող երևույթների և ապրումների համապատասխան ձևը: Նրա աշխատասենյակում երբեմն որպես մահճակալ ծառայող թախտի կողքին կախված էր քառյակների արկղը: Կյանքի վերջին տարիներին քառյակներ գրելիս նա դրանք դնում էր այդ արկղի մեջ: Մի գիշեր նա երազից հետո երկու անգամ արթնանում է և առանց լամպը վառելու գրում է երկու քառյակ: Երկրորդ անգամ արթնանալիս չի նկատում, որ նույն թղթի վրա է գրել և, ցավոք, այդ երկու քառյակներն էլ այսօր անընթեռնելի են:

Բանաստեղծն իր տեսած «գունավոր» երազների, ենթագիտակցական աշխարհում ապրած զգացումների և ընկալումների նշանակությունը համազորել ու հավասարեցրել էր կյանքի իմաստին ու արժեքին. «Ես էնքան շքեղ ու թանկ երազներ եմ տեսել, որ ամեն մինը ինձ համար մի գեղեցիկ կյանք արժի ...»[72]*: Բանաստեղծը, ինչպես յուրաքանչյուր անհատ, իրականության մեջ որոնում ու չէր գտնում իր գունավոր երազները, և իրականության ու երազի՝ հաճախ աններդաշնակ գոյության ու դրանից ծնված մարդկային հոգու դրամայի մասին պատմում էր նաև զավակներին: Դստեր՝ Անուշի ալբոմում բանաստեղծը գրում է.*

Երազեցի շարունակ
Իմ կյանքի մեջ ես մանկուց,
Ու մընացի միշտ մենակ
Պատրանքի մեջ՝ ես մանկուց:

Ես չըգտա ոչ մեկին
Երազներից իմ շըքեղ,
Եվ ոչ մի մարդ, ոչ մի կին՝
Հերոսներից իմ շըքեղ[73]:

Եզրակացություն

Արվեստի երկերի ստեղծումը զուգադրելով աստվածային արարչագործության հետ, «բանաստեղծության ոգին», ներշնչանքը, ինտուիտիվ զգացումները

[71] *ԹԺՀ. 2009, 345:*
[72] *ԹԺՀ. 2009, 189:*
[73] *Թ ու մ ա ն յ ա ն. 2018, 309:*

կապելով վերերկրային երևույթներին՝ Հովհ. Թումանյանն այսօր կանգնում է ոլորտի խնդիրներով զբաղվող ժամանակակից գիտնականների կողքին: Նրան մատչելի էին խորհրդավոր աշխարհի բարդ զգացողությունները, որոնց շնորհիվ հասու էր սովորական մարդու համար անտեսանելի ճշմարտությունների: Բոլոր ժամանակների և մարդու հավերժական ապրումներն արտահայտող բանաստեղծի թե՛ կյանքը, թե՛ նրա հոգեկան ու նաև գեղարվեստական աշխարհը պարունակում է բազմազան շերտեր՝ որոնք պայմանավորված են ենթագիտակցական զգացողություններից եկող ազդակներով, որոնք դեռ բացահայտելու են գիտական հետազոտողներն ու, մասնավորապես, հոգեբանները:

Սուսաննա Հովհաննիսյան – բ. գ. դ., ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայ հին գրականության բաժնի առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ հայ մշակույթի և հայ դասական գրականության պատմություն, թումանյանագիտություն: Հեղինակ է 15 մենագրության և շուրջ 300 հոդվածների ու հրապարակումների: sushovh@mail.ru

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ավետիսյան Զ. 1973, Թումանյանի ստեղծագործական լաբորատորիան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 211 էջ:

Ավետիսյան Զ. 1998, Գրականության տեսություն, դասագիրք, Երևան, Նաիրի, 224 էջ:

Եղիազարյան Վ. 2021, Հովհաննես Թումանյանը և նրա եղբայր Ռոստոմի սպանության առեղծվածը, Երևան, «ՎՄՎ-ՊՐԻՆՏ» հրատ., 312 էջ:

Թումանյանը ժամանակակիցների հուշերում. 2009, Երևան, «Էդիթ Պրինտ» հրատ., 1004 էջ:

Թումանյան Հովհ. 1994, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հ. 6. Քննադատություն և հրապարակախոսություն 1887–1912, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 672 էջ:

Թումանյան Հովհ. 1995, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հ. 7. Քննադատություն և հրապարակախոսություն 1913–1922, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 721 էջ:

Թումանյան Հովհ. 1997, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հ. 9. Նամակներ 1885–1904, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 707 էջ:

Թումանյան Հովհ. 1999, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հ. 8. Ուսումնասիրություններ, օրագրեր և այլ նյութեր, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 712 էջ:

Թումանյան Հովհ. 1999, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հ. 10. Նամակներ 1905–1922, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 711 էջ:

Թումանյան Հովհ. 2018, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հ. 1. Բանաստեղծություններ, Երևան, «Բեկոր-հրատ.», 786 էջ:

Թումանյան Հովհ. 2019, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հ. 3. Պոեմներ, Երևան, «Բեկոր-հրատ.», 584 էջ:

Թումանյան Ն. 1987, Հուշեր և զրույցներ, Երևան, «Լույս» հրատ., 335 էջ:

«Հորիզոն» (Թիֆլիս), 27. I. 1916, 07. II. 1916, 13. I. 1917:

Ղազարոս Աղայանը ժամանակակիցների հուշերում. 1967, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 529 էջ:

Սևակ Պ. 1974, Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 5, Երևան, «Հայաստան» հրատ., 416 էջ:

«Տարազ» (Թիֆլիս), 1916, թիւ 3:

Ананьев Б. Г. 1960, Психология чувственного познания. М., Изд-во АПН РСФСР, 485 с.

Бодалев А. А. 1995, Личность и общение. М., «Педагогика», 328 с.

Хэнзел Ч. 1970, Парапсихология. М., «Мир», 321 с.

Лурия А. Р. 2006, Лекции по общей психологии (серия «Мастера психологии»). СПб., «Питер», 320 с.

Морозов И. М. 1990, Природа интуиции. Минск, Изд-во Университетское, 141 с.

ИНТУИЦИЯ В ЖИЗНИ ОВАНЕСА ТУМАНЯНА

СУСАННА ОВАНЕСЯН

Резюме

Ключевые слова: Ов. Туманян, интуиция, предчувствие, предвидение, сон, психологические сигналы, сверхчувственные восприятия, воображение, творческое вдохновение, инстинкт.

Ованес Туманян был в значительной степени наделен интуитивным восприятием причинно-следственных связей явлений и реалий. Ему были доступны сложные ощущения подсознательного мира, благодаря чему интуиция и предвидение стали существенными составляющими мировоззрения и миропонимания поэта, важными средствами познания мира.

Поэт всегда связывал момент творческой концентрации с внутренним побуждением, вдохновением и интуитивным чувством. Туманян был убежден, что разум всегда должен быть связан с инстинктом, иначе не будет создано истинное произведение искусства. Восприятие Туманяном феноменов подсознания родилось из собственного жизненного опыта.

Туманян воспринимал интуицию, предчувствие, предвидение, воображение, чувство гармонии как неотъемлемые свойства таланта. Он всегда связывал момент творческой концентрации с внутренним побуждением, вдохновением и интуитивным чувством автора.

Проявлениями пророческих способностей поэта были не только предвидения событий в жизни его близких, но и исторических событий, происходящих в жизни общества. Туманян предсказал русскую революцию 1905 г., армяно-татарские межэтнические столкновения, Геноцид 1915 г.,

политические споры генерала Андраника, крушение поезда, следовавшего из Пятигорска в Тбилиси (1917 г.) и др.

Ов. Туманян мог творить под непосредственным воздействием сна, мог найти во сне искомые месяцами слова и выражения, соответствующие способы для выражения мыслей, явлений и переживаний. Изучение сновидений поэта, его пророчеств, проявлений интуиции позволяет глубже раскрыть как его подсознательный мир, так и его психологическую характеристику.

Сусанна Ованесян – д. филол. н., ведущий научный сотрудник отдела древней армянской литературы Института литературы им. М. Абегяна НАН РА. Научные интересы: история армянской культуры и армянской классической литературы, туманяноведение. Автор 15 монографий и около 300 статей и публикаций. sushovh@mail.ru

INTUITION IN HOVHANNES TUMANYAN'S LIFE

SUSANNA HOVHANNISYAN

S u m m a r y

Key words: Hovh. Tumanyan, intuition, foresight, sleep, psychological signals, extrasensory perception, creative inspiration, instinct.

Hovhannes Tumanyan was largely endowed with an intuitive perception of the cause-and-effect relationships of phenomena and realities, as well as telepathic abilities. Complex sensations of the subconscious world were available to him, thanks to which intuition and foresight became essential components of the poet's worldview and world perception, became important means of knowing the world.

The poet always associated the moment of creative concentration with inner motivation, inspiration and intuitive feeling. Tumanyan was convinced that reason must always be connected with instinct, otherwise a true work of art would not be created. Tumanyan's perception of the phenomena of the subconscious was born from the poet's own life experience.

Tumanyan perceived intuition, foreboding, foresight, imagination, a sense of harmony as integral properties of talent. He always associated the moment of creative concentration with the inner motivation, inspiration and intuitive feeling of the author.

The manifestations of prophetic abilities are not only events in the life of his loved ones, but also foresight, prediction of historical events taking place in the life of society. Tumanyan predicted the Russian Revolution of 1905, the Armenian-Tatar inter-ethnic clashes, the Genocide of 1915, the political disputes of General Andranik, the train wreck from Pyatigorsk to Tiflis (1917), etc.

Tumanyan could create under the direct influence of sleep, could find in a dream the words and expressions he had been looking for months, the appropriate ways to express thoughts, phenomena and experiences. The study of the poet's dreams, his prophecies, manifestations of intuition allows to reveal more deeply both his subconscious world and his psychological characteristics.

Susanna Hovhannisyan – Doctor of Sciences in Philology, Leading Researcher at the Department of Ancient Armenian Literature of the NAS RA Institute of Literature after M. Abeghyan. Scientific interests: history of Armenian culture and classical Armenian literature, Tumanyan studies. Author of 13 monographs and over 200 scientific articles and publications. sushovh@mail.ru